



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



Ա.—ԴՕ



Ր Ե Բ Ե Կ Ա

ԶՐՈՅՑ Բ. ԽՕՏԵՄՍԿՈՒ

Արտատպուած «Մշակ» ից

891.99
ԽԵ-80

Ա.ՊԵՏԵՐԲՈՒՐԳ
ՊՈՒՇԿԻՆԻԱՆ ՏՊԱՐԱՆ
1903

Հ. Ռ. Չ. Բարձրագույն դպրոցի
18-9 NOV 2011
Բարձրագույն դպրոցի

91.99

Ա-ԴՕ

Դ-80

Լ. Մ.

Ր Ե Բ Ե Կ Ա

ԶՐՈՅՑ Բ. ԽՕՏԵՄՍԿՈՒ

Արտատպուած «Մշակ» ից

Ա. ՊԵՏԵՐՐՈՒԻԳ
ՊՈՒՇԿԻՆԵԱՆ ՏՊԱՐԱՆ
1903

Дозвол. Цена. С.-Петербургъ, 16 Октября 1903 г.



2302
38

„Пушкинская Скоропечатня“, Лештуковъ, 4.

Ռ Ե Բ Ե Կ Ա

(Զրոյց Բ. Խօսեմսկու)

Լեհական թագաւորութեան Կ—վ քաղաքի հրէական տարբեր գոյնի և տարբեր մեծութեան յուշարձաններով հարուստ գերեզմանատան կենտրոնում բարձրանում է մամուապատ, չը յղկված մի սև քար, որի վրա հազիւ նշմարել էին սպիտակ տառերով գրված հետեեալ անպաճոյճ խօսքերը.

Իր եղբայրների համար

Զոհված

Սուրբ Ռեբեկան.

Ամբարձաւ երկինք 17... թ. Խեշ-վօնի 20-ին.

Հասարակ քար, հասարակ բառեր, բայց նրանք պատմում են մի մուսյլ անցք:

Նա տեղի էր ունեցել հարիւր յիսուն տարի սրանից առաջ, երբ լեհական ազնուականութեան լուծը ծանրացել էր Ուկրայինայի վրա, և առանձնապէս նրա ճնշման

տակ հեծում էին հրէաները: Եւ ահա նոյն այդ քաղաքում, որի տները սարսափահար եղած հօտի պէս սղմվել և կպել էին միմեանց, իշխում էր ազնուական կոմս Եարիդօփինսկին, որն իր մարմարեայ մուսյլ և վիթխարի ամբողջից իր հայդուկներով տարածել էր շորս կողմը սարսափ՝ պահանջելով բոլորից անպայման հնազանդութիւն: Եւ ամենքը վախից ստորանում էին վերջին ծայր, որպէս զի նրա բարի տրամադրութիւնը վաստակեն:

Ծերունի բարբին ունէր մի թուռ, Ռեբեկա անունով, որի տասնևութ տարին զեռնոր էր լրացած. հասակով վայելուչ որպէս արմաւենի, դէմքը գեղեցիկ որպէս լուսինը, շրթունքները մայիսեան նոր բացւած վարդի նման, վճիտ ծովի պէս պայծառ փայլում էին նրա թուլս թուլս մեծ աչքերը իրանց մետաքսանման թերթերունքներով:

Նա որը էր և նրան դաստիարակեց նրա պապը:

Մի անգամ Եարիդօփինսկին, նստած իր արարական սև նժոյզի վրա, անցնում էր բարբիի տան առջևից, երբ Ռեբեկան կանգ-

նած լուսամուտի մօտ՝ ջրում էր ծաղիկները: Յանկարծ իշխանի հայեացքն ընկաւ լուսամուտին և նա որպէս արձան մնաց ձիու վրա մեխված: Պայծառ արեգակի ճառագայթները այնպէս չէին կարող կուրացնել նրան, ինչպէս այդ հրաշալի սև աչքերը, որոնք յանկարծ լայն բացվեցին և զարմացած նայեցին անհամբերութիւնից սանձը կրծող և սմբակներով գետինը քանդող կատաղի ձիուն քաշութեամբ զսպող երիտասարդին: Մի վայրկեան ևս, և նա դարձրեց իր աչքերը իշխանի կրակոտ և կարծես սպառնացող հայեացքից: Իշխանը յանկարծ մտրակեց իր ձիուն և գընդակի արագութեամբ անհետացաւ:

Ջահիլ աղջիկը կանգնած՝ երկար մտածում էր:

— Ռեբեկա, յանկարծ նրա ականջի մօտ հնչեց դուրեկան, բայց երկչոտ մի ձայն.— Ռեբեկա, քեզ ասելիք ունեմ:

Նա յետ դարձաւ և կարմրեց այն վարդի նման, որը լուսամուտում այնպէս սիրուն ծաղկել էր արեգակի տաքութիւնից. նրա առաջ կանգնած էր իր պապի եղբօրոր-

դին, բարձրահասակ, վայելչակազմ երիտարդ
Ջունդէլը, որը ամօթխածութեամբ նայում էր
նրան: Նա Ռեբեկայի մանկութեան խաղըն-
կերն էր, որ շատ անգամ խաղի ժամանակ
վերցրել էր իր վրա ամուսնու դերը, և, պէտք
է խոստովանած՝ պատուով կատարել էր իր
պարտքը, պաշտպանելով նրան յանդուգն և
լկտի տղաների յարձակումներից: Բայց հէնց
որ նրանք հասակ առան և փոքրիկ երեխա-
ներից դարձան ջահիլ մարդիկ, նրանց յա-
րաբերութիւնները փոխվեցին. նա ինչ որ
վախկոտութեամբ հեռացաւ Ռեբեկայից, իսկ
վերջինս չէր փորձում առաջվայ պէս եղբայ-
րաբար մօտենալ նրան, բայց կրակը, որը
փայլում էր նրանց աչքերում և կենդանի
պահվում էր նրանց անմեղ հոգիների մէջ,
անխօս ասում էր, որ Ջունդելը ջերմ սի-
րում էր ջահիլ աղջկան, իսկ Ռեբեկան էլ
փոխադարձաբար նրան:

Ջունդելը մօտեցաւ:

— Դու գիտես, Ռեբեկա, ասաց նա. և
նրա ձայնը սկսեց դողդողալ, դու գիտես
թէ այսօր ինչ ասաց հօրեղբայրս—նա հա-

նեց թաշկինակը և սրբեց թաց ճակատը—
դիտես, Ռեբեկա, նա ասաց կարևոր բան
ինձ ու քեզ վերաբերեալ, առանձնապէս ինձ:

Ռեբեկան նայեց նրա աչքերին:

— Օրինակ ինչ:

Ջունդելը տատանվեց, բայց յետոյ, վճռո-
ղական տեսք ընդունելով՝ շփոթված ասաց.

— Մեզ ուզում են, սիրելի Ռեբեկա,
միացնել յաւիտեան, բայց ես չը գիտեմ թէ
դու ինչ կարծիքի ես այս մասին, իսկ ես
չեմ ուզում, որ ակամայ լինի այդ բանը,
Ռեբեկա, քո բախտաւորութիւնը ամեն բա-
նից թանգ արժէ ինձ համար, ես գոնէ կը
գոհէի ամեն բան քեզ համար:

Վառ կարմրութիւն անցաւ Ռեբեկայի
այտերի վրա, նրա շրթունքները դողում էին,
աչքերը խոնարհվեցին ու հազիւ հազ լսելի
ձայնով ասաց նա:

— Իսկ ես... Ես սիրում եմ քեզ, Ջուն-
դէլ, և ինչն էլ դու հարցնում ես ինձ այդ
բանը...

Կիրակնամտի գիշեր էր: Նշանադրութեան պատճառով ըարբբիի տանը հաւաքվել էր մեծ բազմութիւն տօնական ճոխ հագուստներով:

Յանկարծ, սաստիկ հեալով, դահլիճը մտաւ շփոթված հանդիսականներից մէկը, որը դուրս էր եկել մի փոքր թարմանալու, մօտեցաւ ըարբբիին և մի ինչ-որ բան շքնջաց նրա ախանջին: Յուզմունքի ստուեր անցաւ ծերունու դէմքի վրայով և նա շտապով դուրս գնաց: Ամենքը վախեցած վեր թռան իրանց տեղերից և, շրջապատելով ներս վազողին, սկսեցին նրան անհանգստութեամբ հարցովորձ անել:

— Ի՞նչ է պատահել, ի՞նչ է պատահել:

— Էնչ որ սուրհանդակ եկաւ կոմսից և մի նամակ բերեց ըարբբիին:

Չուտով ըարբբին վերադարձաւ և ամենքը թափվեցին նրա վրա, բայց նա մռայլ դէմքով տալիս էր բոլորին անորոշ պատասխաններ:

Այդ նոյն հասարակութիւնը շամբշի (սինազօգայի սպասաւոր) հրաւիրանքով միւս

օրը խմբվեց ըարբբիի տանը և անհանգիստ կերպով պատրաստվում էր լսելու թէ ինչ պիտի ասէ ըարբբին, որը, կծկված և դառնացած սարսափելի վշտից, նստած գլուխը՝ քարշ, սպասում էր՝ մինչև ամենքը կը նստէին: Զունդէլը և Ռերեկան գունատ կանգնած էին դրան մօտ և դողում էին, նայելով իրանց պապին, որը ըստ երևոյթին պատրաստվում էր յայտնելու մի սարսափելի նորութիւն:

— Եղբայրներ, սարսափելի դժբաղդութիւն է գալիս մեզ վրա, և մենք այդ չէինք նախատեսում: Աստուած, ըստ երևոյթին, բարկացած է մեզ վրա և երեսը դարձրել է մեր քաղաքից: Երէկ կոմսը ուղարկել է իմ ետեից և ես այսօր եղայ նրա մօտ. կոմսը պահանջեց, որ մեր հրէայ հասարակութիւնը մի շաբաթվայ ընթացքում հարիւր հազար գուլդէն մտցնի նրա գանձարանը: Հակառակ դէպքում նա անպատճառ կը գրաւի մեր բոլոր կարողութիւնը և մեզ էլ կարտաքսի քաղաքից: Ոչ թագաւորը, ոչ էլ նրա մինիստրները, աւելացրեց նա, ոչինչ չեն կարող անել կոմսին մեր պատճառով, որով-

հետև նա վարվում է իր սեփական քաղաքի մէջ ինքնագլուխ, իսկ նրանց հաղիւ թէ զբաղեցնի Լեհաստանի մի հեռաւոր անկիւնում ընկած մի քանի հարիւր հրէաների ճակատագիրը:

Բարբին լռեց: Նրա կրծքից դուրս թռած խոր հառաչանքը արձագանք գտաւ միւսների սրտերում, ամենքը, կարծես կաթուածահար եղած՝ չը կարողացան շարժվել իրանց տեղերից: Բոլորին տիրեց վայրկենական սարսափը և միայն մի քանի ըօպէից յետոյ լավեցին կանացի ցնցող լացի ձայները:

— Ի՞նչ անենք. մի՞թէ ուրիշ ելք չը կայ:

Բարբին գլուխը կախ գցեց, նրա անհանգիստ հայեացքը անցաւ գեղեցիկ թռուան վրայո՞վ, որը մեռելային դեղնութեամբ ցած գցած գեղեցիկ աչքերով շարունակում էր կանգնած մնալ: Զունդէլը, ինչպէս քարացած, մոռալ հայեացքով յենվել էր դռան շէմքին:

— Ելք կայ, եղբայրներ, կայ ելք, — ձգձգված և ճնշված ձայնով ասաց նա՝ սրբելով երեսից գլորվող արտասուքները —

բայց ինչպիսի գնով — ինչպիսի գնով: Սարսափելի է ինձ ասել. ինչպէս մեր նախահայր Աբրահամը, իսկուլթիւնը թագցնելով իր կին Սառայից, թոյլտուլթիւն խնդրեց վերցնել իր հետ իր միակ որդուն — Իսահակին ու տանել լեռը, որ յետոյ նրանից ծածուկ, հնազանդվելով Աստուծու կամքին, զոհ բերէր նրան Տիրոջը, ո՞վ Աստուած, Աստուած իմ... և լռեց:

Անբաղդ ծերուկը քարշ գցեց գլուխը և լռեց:

Բարբին վերջապէս բարձրացրեց գլուխը:

— Կոմսը կը փոխի իր վճիռը և մինչև անգամ կը վարձատրի մեզ նոր առանձնաշնորհումներով, եթէ... իմ թուր Ռերեկան կը տեղափոխվի նրա մօտ, ամբոցը...

Ռերեկան բարձրացրեց իր հանգած աչքերը և նայեց ծերունու վրա, ինչպէս նայում է ոչխարը, երբ անգուլթ մօրթողը շողացնում է սուր լեզուակը: Եւ ապա անհաստատ քայլերով մօտեցաւ ծերունուն, զրից ձեռքը նրա գլխին և ասաց.

— Պապիկ, մեր պատմութիւնը ասում է, որ մի ժամանակ, երբ մենք դեռ ևս խա-

ղաղ ապրում էինք աւետեաց երկրում, մեզ վրա յարձակվեց բարբարոս Հողեփերնէսը իր վայրենի դնդով: Այն ժամանակ վճռվեց, որ ժողովրդի փրկութեան համար միմիայն Յուզիթը զոհվի: Յուզիթը անշուշտ կը սպանէր իրան, եթէ չարագործի պիղծ ձեռքը մօտենար նրան, բայց նա ընթացաւ դէպի ուղիղ մահ իր եղբայրների համար: Յուզիթը պիտի լինի արդար օրինակ մեզ և մեր յետնորդներին: Եւ ես պատրաստ եմ, պապիկ... Ես վճռել եմ, այլապէս վտանգի մէջ է ձեր բոլորի կեանքը, որովհետեւ կոմսը անշուշտ կ'ուղարկի իր հայգուկներին մեզ ջընջելու:

Ծերունին սեղմեց իր կրծքին մեռելի պէս գունատ ու դողդողացող թոռանը, և խուլ հեկեկանքը լցրեց ամբողջ տունը: Միայն Զունդէյը չէր լալիս, նրա աչքերը շարունակվում էին վառվել վրէժխնդրութեան կրակով:

— Եւ դու, Ռեբեկա, ի հարկէ չես մոռանայ, որ եթէ վճռել ես լինել Իսահակ, ես էլ պէտք է կատարեմ Աբրահամի գերը և

քո առաջին նշան տալուն պէս ես կը լինեմ քեզ մօտ, նրա մօտ... այնտեղ...

Ռեբեկան բարձրացրեց գլուխը:
— Լաւ, Զունդէյ...

Սարսափելի լուրը կայծակի արագութեամբ տարածվեց դրացի ազնուականների մէջ և հասաւ թաղաւորական պալատը: Կօմս Եաբիդփինսկուն դտան մեռած՝ համաքաղաքացի իր սիրունի հրէուհու հետ միասին արինաթաթախ. իսկ նրանց մօտ գնդակահար եղած նոր սպասաւորի դիակը, որը, ինչպէս յայտնվեց, հրէուհու ազգականն էր:

Չարագործին գտնելու բոլոր ջանքերը դուր անցան: Սակայն գաղտնիքը բացում է Կ—վի գերեզմանատան ալևոր, անշուք, չը յղկված քարը...

2307
38



The first part of the paper is a list of names and titles, including
 names of individuals and their respective positions or titles. The text is
 arranged in a structured manner, likely representing a formal document or
 a list of personnel. The names are written in a cursive or semi-cursive
 hand, and the overall layout is organized into columns or rows.



A faint, illegible stamp or mark located in the bottom right corner of the page. It appears to be a rectangular impression, possibly a library or archival stamp, but the text within it is too faded to be read.

ՀՀ Ազգային գրադարան



NL0349439

34872

Նոյն թարգմանչի՛

Մակեդոնիա 7 կոպ.

